ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«20» դեկտեմբերի 2018 թվականի N: 329 ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻՆ 2018 ԹՎԱԿԱՆԻՆ ՏԱՐԵՐԱՅԻՆ ԱՂԵՏՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 29-ի N 1405-Ն որոշման 4-րդ կետի դրույթների.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում գյուղատնտեսական հողօգտագործողներին 2018 թվականին տարերային աղետների հետևանքով պատճառված վնասների մասնակի փոխհատուցման տրամադրման աշխատանքներն իրականացնելու նպատակով ստեղծել հանձնաժողով՝ համաձայն թիվ 1 հավելվածի:

2. Հանձնաժողովին՝

1) Տեղական ինքնակառավարման մարմինների հետ համատեղ կազմել տարերային աղետների հետևանքով տուժած հողօգտագործողների ցանկ:

2) Մինչև 2019 թվականի փետրվարի 10-ը Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն ներկայացնել տեղեկատվություն՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի հողօգտագործողներին տարերային աղետների հետևանքով պատճառված վնասների մասնակի փոխհատուցված գումարների վճարման վերաբերյալ:

3. Սույն կարգադրության կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի տեղակալ Վարդան Գրիգորյանին:

Կ.ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ
2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20 -Ի
ԹԻՎ 329 ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ

ԿԱԶՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻՆ 2018 ԹՎԱԿԱՆԻՆ ՏԱՐԵՐԱՅԻՆ ԱՂԵՏՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Նալբանդյան Անդրանիկ	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի պետ, հանձնաժողովի նախագահ,
Վարձելյան Արամ	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի գլխավոր մասնագետ, անդամ,
Գևորգյան Արտավազդ	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ, անդամ,
Խաչատրյան Սարգիս	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժնի գլխավոր մասնագետ, անդամ,
Սուվարյան Անահիտ	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ, անդամ,
Թորոսյան Հրանտ	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնող, անդամ,
Հարությունյան Արմեն	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետ, անդամ,
Հովհաննիսյան Վաղինակ	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության տեղական ինքնակառավարման և համայնքային ծառայության հարցերի բաժնի առաջատար մասնագետ, անդամ,
Ալեքսանյան Ֆլորա	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի առաջատար մասնագետ, անդամ,

Մելոյան Սարգիս	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի քաղաքաշինության վարչության բնակարանային ենթակառուցվածքների գործունեության բաժնի առաջատար մասնագետ, անդամ :

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ Տ. ՂԱՐԻԲՅԱՆ